

**Բուհի վճարովի համակարգի ուսանողներին՝ ըստ ունեցած կարգավիճակի ուսման վարձավճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ (կցվում է դիմումին)**

- 3.6.2 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ մինչև 23 տարին լրանալը – ուսանողի անձնագիր, ծննդյան վկայական, մահվան վկայական, ծնողների ամուսնության վկայականի պատճենները
- 3.6.3 23 տարին չլրացած միակողմանի ծնողագուրկ /միածնող/ ուսանողներ – ուսանողի անձնագրի, ծննդյան վկայականի, մահվան վկայականի, ծնողների ամուսնության վկայականի պատճենները
- 3.6.4 մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներ – ուսանողի անձնագրի, երեխայի ծննդյան վկայականի, ամուսնության վկայականի պատճենները
- 3.6.5 3 և ավելի անչափահաս երեխա կամ 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողներ – երեխաների ծննդյան վկայականների, ծնողների անձնագրերի, ծնողների ամուսնության վկայականի պատճենները, տեղեկանքներ ուսանողների ուսումնառության մասին
- 3.6.6 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներ – ուսանողի անձնագրի կամ ծննդյան վկայականի, հաշմանդամության մասին ԲՄՓՀ-ի տեղեկանքների, ծնողների անձնագրեր, ծնողների ամուսնության վկայականի պատճենները
- 3.6.7 Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին, ինչպես նաև պայմանագրային զինծառայության ընթացքում ապրիլյան հերթապահություն իրականացրած կամ ապրիլյան գործողություններին մասնակից ուսանողներին - անձնագրի, զինգրքույկի համապատասխան նշմար էջերի պատճենները
- 3.6.8 Սոցիալապես անապահով և ընտանիքի անապահովության գնահատման համակարգում հաշվառված/ընտանիքի անապահովության սահմանային միավորից ցածր միավոր/0-27.99/ ուսանող ընտանիքների/ ուսանողներ- ուսանողի անձնագրի պատճեն տեղեկանք ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունենալու նշումով
- 3.6.9 Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա- ուսանողներ - ուսանողի անձնագիր, ծննդյան վկայական, ծնողների անձնագրեր, ծնողների ամուսնության վկայականի պատճենները, տեղեկանք ծնողների դպրոցներից,
- 3.6.10 Մարզական և ստեղծագործական ակնառու հաջողություն ունեցողներին- ուսանողի անձնագրի, համապատասխան դիպլոմների ու մեդալների պատճենները, ակնառու հաջողությունը հաստատող փաստաթղթեր
- 3.6.11 Փոխատեղման/ռոտացիա/ մրցույթի արդյունքում 0.1 միավոր տարբերությամբ վճարովի համակարգ տեղափոխված ուսանողներին
- 3.6.12 Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող ուսանողներին - ուսանողի անձնագիր պատճեն, առանձնահատուկ դեպքը հավաստող փաստաթղթերը, դեպքին առնչվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր